ՀՀ ԿԳՄՍ <<Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ ենթակա ուսուցիչների վերապատրաստում>>

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝Հանրակրթական առարկայական չափորոշիչներով ամրագրված նվազագույն գիտելիքների յուրացման ապահովումը համագործակցության մեթոդով

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ ՄԱՐՏՈՒՆԻ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԳԱՅԱՆԵ ԶԻՐՈՅԱՆ

ԴՊՐՈՑ՝ <<Զոլաքարի Ալ.Վարդանյանի անվան N 2 միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ

Մարտունի-2022

Բովանդակություն

1Ներածություն----------2

2Գրական ակնարկ----------5

3.Փորձարական հետազոտություն----------7

3.1Խմբի նկարագիրը----------8

3.2Փորձարական դասեր----------8

3.2.1Փորձարական դաս-1----------8

3.2.2Փորձարական դաս-2----------13

4.Վերլուծություն----------17

5.Գրականության ցանկ----------18

1.Ներածություն

Ժամանակակից 12-ամյա միջնակարգ կրթության շրջանակներում հայերենի՝որպես մայրենի լեզվի, և գրականության ուսուցումը կարևոր նշանակություն ունի անհատի , քաղաքացու բարոյական կերպարի և արժեքային համակարգի ձևավորման գործում:

Լեզվի ուսուցման անփոխարինելի միջոց է գեղարվեստական գրականությունը:

Գրական բնագրերը օգնում են սովորել լեզվական այն երևույթներն ու հասկացությունները ,որոնք ունեն գործնական նշանակություն և նպաստելու են

Ճիշտ խոսք կազմելու,մայրենի լեզվով ազատ հաղորդակցվելու կարողությանը, լեզվառճական հմտությունների զարգացմանը, ստեղծագործական կարողությունների խթանմանը:Սրանով ավելի արդյունավետ է դառնում լեզվի և գրականության կապ:

Գրականության ուսուցումը նպաստում է ազգային գեղարվեստական մտածողության զարգացմանը , օգնում է բացահայտելու հայ ժողովրդի պատմական ճակատագիրը և հայ մարդու կերպարը,գրական-գեղարվեստական նյութը ունի ճանաչողական և դաստիարակչական նշանակություն:

Հայոց լեզվի ուսուցման նպատակը պետք է լինի սովորողի մեջ մշակել ժամանակակից գրական հայերենով համապատասխան խոսք կառուցելու,իր խոսքը վերհսկելու, մայրենի լեզվով ամենատարբեր բնույթի տեքստեր կարդալու և ինքնուրույն հասկանալու կարողություններ:

Հայոց լեզվի դպրոցական դասընթացը անհրաժեշտ և բավարար գիտելիքներ է տալիս լեզվական համակարգի բոլոր բաժինների վերաբերյալ:Հայոց լեզվի դասընթացը պետք է նպաստի գործնական բնույթի գիտելիքների , հմտությունների ու կարողությունների զարգացմանը:

Միջնակարգ դպրոցում գրականություն առարկայի դասավանդման նպատակն է գրական ստեղծագործությունների ուսումնասիրությունը,որի ընթացքում սովորողներին նրանց տարիքին և կրթական մակարդակին համապատասխան համակարգված գիտելիքներ են հաղորդվում գրականության տեսության և պատմության,նշանավոր հայ և օտարազգի գրողների կյանքի ու գործի վերաբերյալ,ձևավորվում են քննադատական վերաբերմունք, գրական երկերը համարժեքորեն ընկալելու, վերլուծելու և գնահատելու կարողություններ:

Գրականությունը որպես խոսքի արվեստ սերտ կապի մեջ է ինչպես արվեստի այլ տեսակների հետ,այնպես էլ հայ և այլ ժողովուրդների բանահյուսության հետ:

Գրականության դասավանդման հիմական նպատակներից մեկը անհատի հոգևոր ու մտավոր զարգացմանը, անձի արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելն է, գրական հերոսների օրնակով և գրական երկերի գաղափարագեղարվեստական հարստության օգտագործորմով նրանց մեջ դաստիարակել մարդասիրական ոգի,բարություն, ընկերասիրություն,ազնվություն,բարեխղճություն և մարդու բարոյակամային այլ հատկանիշներ:

Հայոց լեզու և գրականություն ուսումնական բնագավառում ուսուցման շարունակականության սկզբունքն ապահովում է լեզվական մակարդակների հետևողական ընտրությամբ, նախորդ դասարաններում անցած նյութի պարբերաբար կրկնությամբ և նոր նյութի հետ կապելով, բառապաշարի հարաճուն հարստացմամբ ու գործունացմամբ:

2.Գրական ակնարկ

Կրթությունն իր մեջ ներառում է երեք կանոր խնդիր՝ ի՞նչ սովորեցնել(կրթության բովանդակություն) ինչի՞ համար սովորեցնել(կրթության նպատակներ) և ինչպե՞ս սովորեցնել(ուսուցման մեթոդները):ՈՒսուցման մեթոդն ուսուցման անպիսի ձև է,նպատակին հասնելու այնպիսի միջոց,որը կիրառվում է պարբերաբար և մեծ ազդեցություն է թողնում մանկավարժական աշխատանքի ամբողջական ուղղվածության վրա:Միևնույն ժամանակ ուսուցման մեթոդը դասավանդողի և սովորողների հետևողական փոխկապակցված գործողությունների համակարգն է , որն ապահովում է կրթության բովանդակության արդյունավետ յուրացմանը:Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ ուսուցման մեթոդը դասավանդողի և սովորողի համագործակցությունն է ուսումնական միջավայրում,նրանց համատեղ գործողությունն է՝միտված ուսումնական նպատակների իրականացմանը :

Սովորողը ուսումնառության ընթացքում ձեռք է բերում որոշակի ընդհանուր և հիմնարար հասկացություններ, փաստեր հայոց լեզվից, գրականությունից, գրա-կանագիտությունից:Նշյալ ոլորտներից ձեռք բերած գիտելիքների յուրացումը առավել արդյունավետ է դառնում համագործակցային ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառմամբ: Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է ,որը բաղկացած է դասավանդման ընթացակարգերի և մեթոդների ամբողջությունից՝հիմնված դասարանում սովորողների փոքր խմբերի բաժանելու վրա:Երբեմն համագործակցային ուսուցումը անվանում են<<փոքր խմբային ուսուցում>>:

Համագործակցային ուսուցման միջոցով սովորողները կարող են լուծել այն խնդիրները,որոնք իրենց առաջարկվում են՝որպես խումբ:Սովորողները կկարողանան խորացնել իրենց գիտելիքները, ավելի մոտիվացված լինել առաջադրանքները կատարելու համար:Աշխատանքի որակը կարող է աճել՝ համեմատած անհատական աշխատանքի հետ,ձեռք բերած գիտելիքներին տիրապետելու աստիճանը ևս կբարձրանա, քանի որ ուսուցման գործընթացը հիմնված է համագործակցության և փոխօգնության վրա:Համագործակցային ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ և հմտություններ ունենալը,այլև կարևորվում է խմբային զարգացման միջոցով հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ դառնալը:

Խմբի անդամները սովորում են՝

- Տեսնել ամենակարևորները
- Կայացնել համատեղ որոշումներ աշխատանքի եղանակների և փոփոխությունների վերաբերյալ
- Ընդունել շարունակական գնահատումը և մշակումը
- Քննադատաբար գնահատել և արժևորել արդյունքները

- Տալ և ստանալ հետադարձ կապ՝ինքնագնահատում,հետադարձ կապ խմբի անդամներին,խմբային գնահատում՝ ինչպիսի՞ն ենք մենք՝որպես խումբ,ի՞նչը պետք է բարելավենք:ՈՒսուցիչը տալիս է հետադարձ կապ խմբերին և հակառակը:

Այն ուսումնական ռազմավարություն է,որտեղ աշակերտների փոքր խմբերը աշխատում են միասին ,մի ընդհանուր հանձնարարության վրա:Հանձնարարությունը կարող է լինել հեշտ,պարզից բարդ անցումով:ՈՒսուցիչը միանգամից, մի դասի ժամանակ չի կարող օգտագործել մեթոդների հարուստ զինանոցը:Նա պետք է որոշակի դասի համար կատարի ուսուցման մեթոդի,հնարի ընտրություն:

Ուսուցման մեթոդի հիմքում ընկած են այն խնդիրները,որոնք լուծվում են դասի ժամանակ կամ որոշակի փուլում:Բացի դասի նպատակից ու խնդիրներից, մեթոդի ընտրությունը կախված է նաև՝

1.Դասի տիպից ու կառուցվածքից
2.ուսումնական նյութի բովանդակությունից
3.դասարանում աշակերտների թվաքանակից
4.աշակերտների տարիքից
5.պատրաստվածության մակարդակից,շահագրգռվածությունից
6ուսումնադիտողական պարագաների առկայությունից
7.ժամանակից,
8.Ուսուցչի պատրաստվածության մակարդակից և այլ գործոններից:

Համագործակցային ուսուցման տարերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝համագործակցային միջավայրի ձևավորմանը,օգնում է ուսուցչին պլանավորելու դասը,պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության, գնահատման, արժեվորման համար,ինչպես նաև բարելավում է խմբային աշխատանքը:Ըստ Դեյվիդ Ջոնսոնի և Ռոջեր Ջոնսոնի՝ կան 5 հիմնական բաժիներ,որոնք նպաստում են հաջող խմբային ուսուցման.

1.դրական փոխկախվածություն
2.խթանող փոխազդեցություն
3.պատասխանատվություն
4.խմբային գործընթաց:
5.սոցիալական հմտություններ:

Համագործակցային ուսուցման մեթոդներից են

1.՝աշակերտների թիմային առաջադիմություն
2.խճանկար
3.շրջագայություն պատկերասրահում
4.երեք բանալի և մեկ կողպեք
5.հնդյակների մեթոդը և այլն:

Համագործակցային ուսուցման ընթացքում ուսուցիչ չի կարող օգտագործել բոլոր մեթոդները:

Փորձարական հետազոտություն

3.1.Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Զոլաքարի Ա.Վարդանյանի անվան հ. 2 միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանում: Այս դասարանում սովորում են 32 աշակերտ:Աշակերտները սովորում են երկու Խմբում: Իմ խմբում սովորում են 17 աշակերտ՝11 տղա և 6 աղջիկ, որոնք ունեն տարբեր առաջադիմություն և հմտություններ: Խմբում ներգրավված են տարբեր կարողությունների և հմտությունների տեր աշակերտներ, բայց միջին մակարդակի աշակերտներ ավելի շատ են, ինչը պատճառ դարձավ, որ ես իմ հետազոտական աշխատանքը իրականացնեմ համագործակցային ուսուցման միջոցով՝ կարևորելով <<Աշակերտների թիմային առաջադիմություն >> և <<Խճանկար>> մեթոդները, որը հնարավորություն կտա ուսումնական գործընթացի մեջ ներգրավել բոլոր աշակերտներին՝ միաժամանակ ուշադրություն կենտրոնացնելով թույլ սովորող աշակերտների վրա: Այս մեթոդի կիրառման հիմնական քայլերն են՝

ա.առաջադրանքի սահմանումը

բ.տեղեկությունների որոնման տարատեսակ ռազմավարությունները

գ.տվյալներ և տեղեկություններ ստանալու մատչելիությունը

դ.տեղեկությունների օգտագործումը և խնդիրների լուծումը

ե.վերլուծություն

զ.գնահատում:

ՈՒսուցանում-ուսանում գործընթացն ունի երկու նպատակ՝

1.տվյալ առարկայի նպատակը՝դասավանդվող նյութի հիման վրա զարգացնել ճանաչողական հմտությունները:

2.սոցիալական նպատակը՝ առաջինը՝աշակերտները պատասխանատվություն են ստանձնում,երկրորդը՝նյութը դասավանդվում է համագործակցության վրա հինված տարբեր եղանակներով,ինչն իր հերթին զարգացնում է նաև աշակերտների շփման հմտությունները:

3.2 Փորձարարական դաս-1

Իմ փորձարարական առաջին դասի թեման է <<Գոյականի թիվը>> (տե՛ս դասապլան-1 էջ 10): Դասաժամն սկսվեց տնային աշխատանքի ստուգումով.
Բոլորը ներկայացրին տնային աշխատանքները, քննարկվեց և ուղղվեց սխալները: Տրվեց բանավոր հետադարձ կապ: Դասն սկսվեց հարցադրումներով: Ամփոփվեց <<Անձնանիշ և իրանիշ գոյականներ>> թեման, որպեսզի ստուգվեր աշակերտների ձեռք բերած գիտելիքները անցած թեմայից: Աշակերտները պատասխանեցին հարցադրումներին իմ ուղղորդող հարցերի օգնությամբ: Ավանդական մեթոդով նոր թեման բացատրելուց հետո դասարանը բաժանվեց 4-5 հոգանոց տարասեռ խմբերի՝ յուրաքանչյուր խմբում ընդգրկելով գերազանց, միջին և ցածր առաջադիմությամբ աշակերտների: Խմբերին տրվեց նոր թեմային առնչվող հանձնարարություն՝ նշելով, որ հանձնարարության կատարումը համարվում է ավարտված, երբ խմբի յուրաքանչյուր անդամ յուրացրած կլինի նյութը:Յուրաքանչյուր խումբ յուրացնում է դասի իր հատվածը փորձագիտական խմբում և վերադառնում հենակետային խումբը,որտեղ համատեղ ուժերով սովորում են ամբողջ դասը:ՈՒժեղ սովորող աշակերտները օգնում են իրենց թույլ սովորող ընկերներին յուրացնելու դասը:Աշակերտների կողմից նյութի յուրացվածությունը կստուգվի ուսուցչի կողմից տրված առաջադրանքներով: Ապա ստուգվում է նյութի յուրացման աստիճանը: Յուրաքանչյուր աշակերտ ինքնուրույն է կատարում առաջադրանքը: Առաջադրանքի կատարման, ստուգման համար կիրառվող գնահատման համակարգն այնպիսին է, որ յուրաքաչյուր աշակերտ իր գնահատականով իր ներդրումն է ունենում խմբի ընդհանուր ցուցանիշում: Գնահատման միավորների սանդղակի ընտրությունը ուսուցչի հայեցողության տակ է: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է սովորողների առաջընթացը և լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ սովորողների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում կարող է որոշակի ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին և բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից աջակցեն իրենց դասընկերներին՝ բարելավելու իրենց ցուցանիշները, մյուս կողմից՝ պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այսպիսով՝ խմբի յուրաքանչյուր աշակերտ ունի սովորեցնելու և սովորելու խթան: Այս մեթոդը մշակվել է Ռոբերտ Սլավինի կողմից :
Խմբային աշխատանքում դրսևորվում են խմբի անդամների անհատական առանձնահատկություններ, միաժամանակ ձևավորվում խմբի անդամին հատուկ կարողություններ՝ համագործակցելու, դիմացինին լսելու և հարգելու կարողունակություններ: Գլխավոր նպատակը՝ սովորել սովորեցնել: Շատ օգտակար

է դերերի բաշխումը խմբի յուրաքանչյուր անդամի համար՝ ապահովելով, որ յուրաքանչյուր անդամ, իր ընդունակությունների սամմաններում, ներգրավվի խմբի աշխատանքներում: Նման խմբային աշխատանքն ապացուցում է այն տեսությունը, որ աշակերտները կարող են շատ արդյունավետ կերպով սովորել միմյանցից: Արդյունավետ համագործակցության հիմքում ընկած է աշխատանքի հավասար բաժանումը և փոխադարձ պատասխանատվությունը: Դրան կարելի է հասնել՝ խմբի անդամներից յուրաքանչյուրին դեր-առաջադրանք տալով: Արդյունավետ կլինի, եթե ուսուցիչը բաշխի դերերը:

Խումբը կարող է ձևավորվել պատահականության սկզբունքով, աշակերտների ցանկությամբ կամ էլ ուսուցչի կողմից՝ միտումնավոր կերպով:

Համագործակցային ուսուցումը ունենալով դրական շատ կողմեր՝ զերծ չէ նաև թերություններից, այսինքն՝ ունի նաև բացասական կողմեր: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե աշակերտները ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է:

Նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ- որ իրավիճակում կարող են օգտակար լինել:

Դասապլան 1

Ուսուցիչ՝ Գ.Զիրոյան

w

Առարկա՝	Հայոց Լեզու	Ամսաթիվ		Կիսամյակ	1	Դասարան	
Թեմա՝	Գոյականի թիվը						
Օգտագործ-վող նյութեր՝	VII-րդ դասարանի դասագիրք, Տետրեր, կպչուն թղթեր, քարտեր						
Դասի նպատակը՝	➢ Խորացնել և ամրապնդել գոյականի թվի վերաբերյալ գիտելիքները, ➢ Սովորել և հիշել գոյականի թվի կազմության օրենքների շեղումները, ➢ սահմանել՝ ինչ է գոյականի թիվը, ➢ բացատրել գոյականի թվի ուղղագրությունը						
Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդ-յունքները	Աշակերտը կկարողանա • տարբերակել եզակի թիվը հոգնակիից, • բացատրել՝ ինչ է գոյականի թիվը, • ինչպես կազմել գոյականների հոգնակի թվի ձևերը, • ինպես ճիշտ գրել գոյականների հոգնակիի ձևերը:						
Գործողութ-յուններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ			

Մուտք, ներկա - բացակա/3ր/		Ողջունել դասարանին,ն/բ անել		Աշակերտնե րի թիմային առաջադիմո ւթյան մեթոդ Խճանկար
Սկիզբը՝ 5-7ր	Բացել դասագրքերը,պատրա ստվել նոր դասին,նեկայացնել տնային աշխատանքները	Ստուգել տնային աշխատանքը,բացատ րել անհասկանալի մասերը	Ի՞նչ է գոյականը: Քանի՞ տեսակ է լինում, ո-րոնք՞ են անձնանիշ և իրանիշ գոյականնե րը: Ինչպե՞ս են գրվում բաղադրյալ հատուկ գոյականնե րը: Գոյականը քանի՞ թիվ ունի: Ինչպե՞ս է կազմվում հոգնակի թիվը: Ինչպիսի՞	

ընթացք/25-30ր/	Աշակերտները աշխատում են խմբերով, ուսումնասիրում են գոյականի թիվը, կատարում են առաջադրանք, ուսուցման ընթացքում օգնում են ընկերներին յուրացնելնելու նյութը, ինքնուրույն կատարում են առաջադրանքը, խմբերը ներկա-յացնում են կատարված աշ-խատանքը	Ուսուցիչը 1. դասարանը բաժանում է խմբերի,կազ-մում փորձագիտա-կան և ուսումնական խմբեր ուսուցանվող նյութը յուրացնելու համար հետևում խմբերի աշխատան-քին, 2. լսում խմբերին, ստուգում 3. առաջադրանք տալիս,բացա տրում է,ներկայաց-նում է գնահատման չափանիշնե-րը	շեղումներ կան հոգնակի թվի կազմության ժամանակ: Ինչպիսի՞ ուղղագրա-կան դժվարութ-յուններ կան հոգնակի թվի կազմության ժամանակ:	
Ավարտ	Գուշակում են անցկացված դասի նպատակները, համեմատում են դասի իմ ներկայացրած նպատակների հետ: թերթիկների վրա գրում են՝ինչ սովորեցին,ինչ թերըմռնում ունեն,և հանձնում են:	Ներկայացնում է դասի նպատակների և վերջնարդյունքների իր տաբերակը,հանձ-նարարում է յուրաքանչյուր աշակերտի թերթիկի վրա նշել իր կողմից նախատեսված վերջ-նարդյունքները սե-փական ձեռքբերումների հետ, նշել նաև թերըմռնուները՝հաջո րդ դասին անդրադառնալու:		
Տնային աշխատանք 3ր		Տնային աշխատանքի հանձնարարում		

Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով
տեղակալ՝ Ն.Մխիթարյան

Թեստ

1.Ընդգծել գոյականները.
Գեղեցիկ,տուն, ուրախություն, Արմեն, կարդալ, սեղան, որտեղ, սեր, արագ,կարծիք(1միավոր)
2.Բերել անձ և իր ցույց տվող գոյականների 2-ական օրինակ(1միավոր):
3.Ճիշտ գրել տրված բաղադրյալ հատուկ գոյականները.(1միավոր
Հայաստանի հանրապետություն, նոր երկիր կղզի, վերին գետաշեն,աշոտ երկաթ
4.Ընդգծել սխալ գրված գոյականները.(1միավոր)
Վիպագրեր, մեծատուններ, Տիգրան մեծ, ծառներ, սյուններ,կայսրներ, դուստրեր, լրագիրներ
5.Ընդգծել որոշյալ առումով գործածված գոյականները.(1միավոր)
Գիրքս վերցնելով՝ մոտեցա Արմենին:
6.Կազմել տրված գոյականների հոգնակի թիվը.(2միավոր)
Աստղագետ,նստացույց,կայսր, մուկ, տուն, մարդ, սեղան,հերթապահ
7.Կազմել նախադասություններ՝գործածելով գյուղացի և երի տասարդ բառեր՝մի դեպքում որպես առարկա,մի այլ դեպքում՝հատկանիշ:(3միավոր)

Փորձարական դաս- 2

Քանի որ կարևորում եմ համագործակցային ուսուցման դերը թույլ սովորող աշակերտներին դասընթացի մեջ ներգրավելու գործում, ապա երկրորդ դասում նույպես կանդրադառնամ համագործակցային մեթոդներին:Թեման Հր. Մաթևոսյանի <<Կանաչ դաշտը>> պատմվածքն է, որը նախատեսված է յոթերորդ դասարանի ծրագրով ՝5ժամով:Փորձարարական դասի համար ընտրել եմ վերջին դասաժամը:Այս դասաժամին քննարկվելու են էկոլոգիական խնդիրները պատմվածքում:Նախորդ դասաժամերին աշակերտները ուղղորդված ընթերցանության միջոցով ուսումնասիրել են պատմվածքի կառուցվածքը, ժանրային և գեղարվեստական առանձնահատկությունները:Դասարանը աշխատել է խմբերով,վերջին դասաժամը նույպես աշխատում են համագործակցային խմբերով:Խնդրի պարզաբանման համար նախապատրաստել եմ ուղղորդող հարցադրումներ.
1.Ինչպե՞ս են գործում բնության օրենքները մարդու,կենդանիների,բույսերի միջև մղվող բնական պայքարում:
2.Մարդը ինչպե՞ս է միջամտում բնության բնականոն ընթացքին և դրա հետևանքները
3.Բնական պայքարը ինչպիսի՞ դրսևորում ունի պատմվածքում:
4.Ո՞ր կողմերի միջև է պայքարը:
Խմբերը մտածում են հարցերի շուրջ և պատրաստում պատասխանները:Ես հարց-

նում եմ թույլ սովորողներին:Խմբերը նույպես նախապատրաստում են հարցեր մյուս խմբերի համար:Հնչում է առաջին խմբի հարցը՝ի՞նչ կլիներ ,եթե մարդիկ իրենց շներով չմիջամտեին ձիու և գայլի պայքարին:Լսում ենք կողմերի պատասխանները:
2-րդ խմբի հարցը՝դուք կցանկանայիք ,մայր գայլին շները խեղդեին:Լսում ենք պատասխանները:
3-րդ խմբի հարցը՝ինչու՞ են պայքարում մայր գայլը և մայր ձին:
4-րդ խմբի հարցը՝այդ պայքարում կարելի՞ է հավասար իրավունքի նշան դնել կողմերի միջև:
Կողմերի պատասխանները լսելուց հետո ամփոփում եմ և տալիս նոր հարցեր:
Ինչպե՞ս է Մաթևոսյանը արտահայտել իր վերաբերմունքը այս պայքարի նկատմամբ:
Քանի որ խմբերը կազմված են գերազանցիկ,միջին մակարդակ և թույլ սովորող աշակերտներից,լավ սովորող աշակերտների օգնությամբ հնչում են պատասխանները թույլերի կողմից:
Ես աշակերտների ուշադրությունը կենրոնացնում եմ պատմվածքում կրկնվող երկու արտահայտությունների վրա.
1.<<Բախտը հո չէր կարող լինել անքան անողոք>>,որը կրկնվում է և՛գայլի պայքարի ավարտին, և՛ հոգնած ու ուժաթափ պառավ ձիու պայքարի ավարտին:Խմբերը պատասխանում են. Այն է՝կողմերը պայքարում են տեսակի պահպանման համար:
2.<<կայծակը չոր ճայթյունով բախվեց ժայռին,մի կողմ շպրտվեց և թաղվեց կանաչ գետնի մեջ>>:Հնչեցնում եմ հարցը՝ինչ՞ու է Մաթևոսյանը կրկնել այս արտահայտությունը:Խմբերը մտածում են և իմ օգնությամբ պատասխանում՝կյանքը շարունակվում է, պայքարը՝ նույնպես:
Խմբերին առաջարկում եմ կազմել Վենի դիագրամ՝մայր գայլին և մայր ձիուն բնութագրելու համար,օգտագործել քառաբաժանի մեթոդը բնության երևույթները նշելու համար:Դասի ավարտին հանձնարարում եմ տանը գրել շարա-դրություն<<Էկոլոգիական խնդիրները պատմվածքում>> վերնագրով և տանը ԿարդալՋեկ Լոնդոնի <<Կյանքի սերը>> պատմվածքը:

Դասապլան 2

Ուսուցիչ՝ Գ.Զիրոյան

Առարկա՝	Գրակա-նություն	Ամսաթիվ		Կիսամյակ	1	Դասա-րան	7
Թեմա՝	Հր. Մաթևոսյան<<Կանաչ դաշտը>> պատմվածքը						
Օգտագործ-վող նյութեր՝	Դասագիրք,կպչուն թղթեր, մարկերներ,բառատետր						
Դասի նպատակը՝	• Հասկանալ բնական երևույթների օրինաչափությունները • Ներկայացնել և հիմնավորել տեսակի պահպանման բնականոն ընթացքը • Հակիրճ ձևակերպել պատմվածքի գաղափարը • Ցույց տալ՝ինչ էկոլոգիական խնդիր է լուծել հեղինակը						
ՈՒսուցման արդյունքներ, որոնք կփաստեն,որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդ-յունքները	՝Աշակերտը կկարողանա՝ • ներկայացնել պատմվածքի գաղափարական նպատակաուղղվածությունը • տալ պատմվածքի կառուցվածքային մասերի վերլուծություն • Արժևորել հեղինակի գրական վարպետությունը • Գնահատել պատմվածքի գեղարվեստական արժանիքները • Հասկանալ և վերլուծել բարձրացված խնդիրները						
Գործողու-թյուններ (ժամ/տևող ություն)	ՈՒսումնական գործնեություն Աշակերտներ	ՈՒսումնական գործնեություն ՈՒսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ			
Մուտք՝ 5-7ր ,ներկա -բացակա/3ր	Աշակերտները ընթերցում են Հանձնարարված վերջին հատվածը,նկա-րում են կանաչ դաշտումարա-ծող քուռակին և մայր ձիուն Պատասխանում	ՈՒսուցիչը աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում է սկզբում և վերջում նույնությամբ կրկնվող հատվածների վրա:ՈՒսուցչի և աշակերտների կողմից տրվում են հարցեր,	Ի՞նչ կլիներ ,եթե մարդիկ չմի-ջամտեին ձիու և գայլի պայքարին Դուք կցանկանայի՞ք, որ շները խեղ-դեին մայր գայլին: Ինչպե՞ս է իր	ՈՒղորդված հարցադրում ներ, Վենի դիագրամ, ուղղորդված ըն-թերցանու-թյուն, կանխագու-շակող			

Դասի ընթացքը/25 -30ր/	և՛ ուսուցչի ուղղորդող հարցերին,և՛ Խմբերի կողմից հնչած հարցերին: Տեքստից դուրս գրում ուսուցչի կողմից ընդգծած հատվածները և բացատրում, լսում և քննարկում հարցերը: Քանի որ խմբերը կազմված են տարբեր կարողությունների տեր աշակերտներից, նախապատվությունը տրվում է թույլ սովորողների պատասխաններին,որոնց օգնում են ուժեղները: Աշակերտները Վենի դիագրամի միջոցով բնութագրում են մայր գայլին և մայր ձիուն,կանխագուշակող աղյուսակի միջոցով մատնանշում են բնության երևույթները: Խմբերը ներկայացնում են իրենց կարծիքները հեղինակային Կրկնությունների առթիվ և բացատրում:	բացատրվում են անհասկանալի բառերը: ՈՒսուցիչը աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում է <<Բախտը հո չէր կարող լինել այդքան անողոք>>արտահայտությանը ,որը կրկնվում է և՛ գայլի պայքարի ավարտին,և՛հոգնած ու --ժաթափ ձիու համար,և 2-րդ արտահայտությունը. <<Կայծակը չոր ճայթյունով բախվեց ժայռին,մի կողմ շպրտվեց և թաղվեց կանաչ գետնի մեջ>>:Այս արտահայտունը կրկնվում է և՛ պատմըվածքի սկզբում, և՛ վերջում:	վերաբերմունքը արտահայտել գայլի և ձիու պայքարի վերաբերմամբ Մաթևոսյանը : Ինչպիսի՞ էկոլոգիական հարց է բարձրացնում: Ինչու՞ է նույն կերպ սկսում և ավարտում պատմվածքը:	աղյուսակ

Ավարտը		Խմբերը 5-6 նախադասությամբ բնու-թագրում են գայլին և ձիուն: Կատարվում է գնահատում:		
Տնային աշխատանք 3ր		Գրել շարադրություն<<Էկոլոգիական խնդիրները պատմվածքում>>		

Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով
տեղակալ՝ Ն.Մխիթարյան

Վերլուծություն

Հիմնվելով հետազոտության արդյունքների վրա՝ կարելի է փաստել,որ աշակերտները սիրով մասնակցում են համագործակցային մեթոդով արված խմբային աշխատանքներին:Սիրով սովորեցնում են և սովորում,ըմբռնում են պատասխանատվությունը և՛ խմբի, և՛իրենց համար:Խմբային գործունեության արդյունքում սովորողների մոտ դրսևորվում են այնպիսի հմտություններ և կարողություններ, որոնք մինչ այդ մութ էին նաև ուսոցչի համար:Լինելով ուղղորդող՝ուսուցիչը բացահայտում է դրանք և ճիշտ կազմակերպում ուսուցումը:Ինչ-

պես ցույց տվեցին հետազոտության արդյունքները,որպեսզի աշակերտները ունենան կայուն գիտելիքներ,պետք է կրկնել, ամրապնդել,կիրառել,կապակցել,հետադարձ կապ կատարել՝ և՛ բանավոր՝հարցադրումների միջոցով, և՛գրավոր՝թեստերի ,քարտե-րի միջոցով:Աշակերտների կարողունակությունները բացահայտելու համար անցկացվեց փորձարարական 2 դաս՝համագործակցային մեթոդների կիրառմամբ:Չեմ կարող ասել ,թե որքանով է այն հաջողել, բայց այնամենայնիվ ուսուցման ճիշտ մեթոդների ընտրությունը կարևոր է ուսուցման նպակադրված արդյունքին հասնելու համար,որի ընթացքում բացահայտվում են աշակերտների կարողունակությունները:

Գրականության ցանկ

1.Ա.Խաչատրյան-ՈՒսուցման արդյունավետ հնարներ,Եր.:Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ,Հայաստան2020,74էջ:
2.Վ.Սահակյան-Համագործակցային ուսուցման, համագործակցայի մեթոդների,հնար-ների կիրառման արդյունավետ հմտությունների ձևավորումը պատմության դասերին: Հոդված:
3.Դ.Ճարատանյան-Համագործակցային ուսուցում:25.07.2021թ:Հոդված:
4.Թեստերի կառուցման և արդյունքների վերլուծության հիմունքներ:-Ձեռնարկ